ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. փետրվարի 6-ից 10-ը Իտալիայի Հանրապետության քաղաք Միլան գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

1) Նաիրուհի Ավետիսյան՝ ՀՀ ՊԵԿ համալիր հարկային ստուգումների վարչության պետի տեղակալ,

2) Անդրանիկ Հակոբյան՝ ՀՀ ՊԵԿ համալիր հարկային ստուգումների վարչության տրանսֆերային գնագոյացման և հարկային համաձայնագրերի կիրառման բաժնի պետ,

3) Վարսիկ Գրիգորյան՝ ՀՀ ՊԵԿ համալիր հարկային ստուգումների վարչության տրանսֆերային գնագոյացման և հարկային համաձայնագրերի կիրառման բաժնի գլխավոր հարկային տեսուչ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Իտալիայի Հանրապետության քաղաք Միլան, 2024թ. փետրվարի 6-ից 10-ը:

3. **Հրավիրող կողմը.**

Իտալիայի Հանրապետության եկամուտների գործակալություն:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

ՏՀՀԿ և ՄԱԶԾ համատեղ «Հարկային տեսուչ առանց սահմանների» ծրագրի շրջանակներում, 2019 թվականի մայիսի 21-ին կնքված «Տեխնիկական աջակցություն տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի և Իտալիայի Հանրապետության եկամուտների գործակալության միջև համագործակցության ծրագրի մասին» փոխըմբռնման հուշագրի (այսուհետ՝ Հուշագիր) համաձայն Իտալիայի Հանրապետության եկամուտների գործակալության ներկայացուցիչների կողմից տրամադրվում է տեխնիկական աջակցություն Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչների համար: Համաձայն Հուշագրի՝ Իտալիայի Հանրապետության եկամուտների գործակալությունը Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին տեխնիկական աջակցություն է տրամադրում մի շարք

ուղղություններով: Մասնավորապես, 2023 թվականի հուլիսի 7-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Իտալիայի Հանրապետության եկամուտների գործակալության միջև կնքվել է «Հարկային տեսուչ առանց սահմանների» հերթական ծրագրի տեխնիկական առաջադրանքը, որով սահմանվել է երկու պետական մարմինների ներկայացուցիչների միջև աշխատանքային ծրագիրը: Աշխատանքային ծրագիրը վերաբերում է տրանսֆերային գնագոյացման կարգավորումների շրջանակներում իրականացվող ծառայությունների վերլուծությանը:

5. Քննարկված թեմաները.

Քննարկման հիմնական թեման առնչվում էր ՀՀ ՊԵԿ ներկայացուցիչների և իտալացի գործընկերների կողմից տրանսֆերային գնագոյացման կարգավորումների շրջանակներում փոխկապակցված կողմերի միջև իրականացվող ծառայությունների համատեղ վերլուծությանը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Եռօրյա աշխատանքային հանդիպումների ընթացքում բարձրացվել են վերը նշված ուղղությանն առնչվող հարցեր:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում վերջնականացվել են վերը նշված վերլուծությունների վերաբերյալ գործնական քննարկումները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է ընդլայնել տեխնիկական աջակցության շրջանակը նաև այլ ուղղություններով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Նաիրուհի Ավետիսյան

Անդրանիկ Հակոբյան

Վարսիկ Գրիգորյան

13.02.2024թ.